ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում **է ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ, ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ և ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 15.09.2020թ-ին կնքված N **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2** գնման պայմանագրում 2024 թվականի մայիսի 16-ին կատարված կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	Պայմանագրի N 1 հավելվածում տեղ գտած վրիպակի շտկում
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ- ԲՄԱՇՁԲ-20/10-2 պայմանագրի Ծավալաթերթ-նախահաշվում տեղ գտած վրիպակի շտկում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 22
15.09.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 գնման պայմանագրի

ք. Երևան 16 . 05 . 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Վանի>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ղ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով **ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ, ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ և ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 15.09.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին շտկել Պայմանագրի N 1 հավելվածում տեղ գտած վրիպակը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշվի վերջին տողի 6-րդ և 12-րդ սյունյակների <<703 932 578.85>> թիվը փոխարինել <<703 932 570.85>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011048510, 900011048361, 900011052462
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Կ. Անտոնյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<Վանի>> ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 2/1
<<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010873120100
ՀՎՀՀ 00412375

Տնօրեն՝

_____ Ղ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.